տեսանքով ծանր կացության մեջ է ընկել»[19]։ Մուհամադ-Ռիզա խանը, որ զորչի-բաշիի զինվորական աստիճան ուներ, Դիլանի բեկլարբեկին էր և ռուսական զորքերի կողմից Դիլանի գրավումից հետո շահ Թահմասպի կողմից նշանակվել էր զինված ուժերի ընդհանուր հրամանատար (սիփահսալար)[20]։

Ցավոք, ձեռքի տակ չունենք այս հրովարտակի պարսկերեն բնագիրը, որով թերևս հնարավոր կլիներ պարզել հրապարակմանը նախորդող իրադարձություններին և քաղաքական նախադրյալներին վերաբերող որոշ մանրամասնություններ։ Այս պարագաներում առավել հավանական է թվում, որ 1726 թ. մարտի 24-ին Մխիթար-բեկի և մի քանի զինակից յուզբաշիների ստորագրությամբ ռուսաց արքունիք հղված աղերսագիր-ուղերձից հուսալի պատասխան չստանալով, փորձ է արվել օգնություն ստանալ այդ ժամանակ Անդրկովկաս և Ատրպատական ներխուժած օսմանյան զորքերի դեմ իրանական զինված ուժերի դիմադրությունը գլխավորող շահ Թահմասպից, որին և շահն արձագանքել է գլխավոր հրամանատար, սիփահսալար Մուհամադ-Ռիզա խանին ուղղված սույն հրովարտակով։

Վերը շարադրվածները գալիս են հաստատելու, որ ռուսաց արքունիքին հղված դիմումի Մխիթար-բեկի կողմից ստորագրված լինելը չի կարող դիտվել ո՛չ որպես Դավիթ-բեկի բացակայության և ո՛չ էլ նրա և Մխիթար-բեկի միջև եղած տարաձայնությունների առկայության մասին վկայող փաստ։ Միանգամայն հավանական է, որ հաշվի առնելով ստեղծված առանձնահատուկ իրավիճակից թելադրվող որոշակի նկատառումներ, նպատակահարմար է համարվել, որ խնդրո առարկա աղերսագիրն ուղարկվի շարժման ճանաչված ղեկավարներից մեկի՝ Մխիթար-բեկի ստորագրությամբ, և ավելի քան ութ ամիս սպասելուց և դրական պատասխան չստանալուց հետո միայն, հավանաբար, շեշտելով ընդհանուր թշնամու դեմ մղվող կռիվներում ուժերը միավորելու և դաշնակցության անհրաժեշտությունը, Դավիթ-բեկը դիմել է շահին, հուսալով որոշ օգնություն ստանալ նրանից։ Իսկ շահը չէր կարող հաշվի չառնել, որ այն ժամանակ, երբ օսմանյան զորքերը թափանցել էին Նախջևան ու Ղափան և դիվանագիտությամբ կամ զենքի ուժով իրենց ենթարկել տեղի խաներից շատերին, նրանց դեմ անզիջում կռվի ելածները հիմնականում Դավիթ-բեկի գլխավորությամբ մարտնչող հայկական զորախմբերն էին։

Սակայն, ինչպես գիտենք, այս հույսերն էլ, չնայած շահի կողմից սիփահսալարին տրված հրահանգի, ի դերև ելան։ 1727 թ. գարնանը Հալիձորի տակ մղված վճռական ճակատամարտում, Դավիթ-Բեկն իր հավատարիմ զինակիցների՝ Մխիթար-բեկի և Տեր-Ավետիսի հետ հայ մարտիկների փոքրաթիվ ուժերով կարողացավ ետ մղել թուրքական զորաբանակների և նրանց հետ դաշնակցած Ֆաթհ-Ալի սուլթանի, Ղարադաղի խանի, Ղարաչորլուների և նրանց միացած տեղական ֆեոդալների բազմահազար զորքերի գրոհները և ապա հարձակման անցնելով՝ ջախջախիչ պարտության մատնել նրանց։ Կրնկակոխ հետապնդելով սարսափահար փախչող թշնամուն, որը կռվի դաշտում թողել էր մի քանի հազար սպանված, մարտական դրոշներ, ռազմամթերք ու հանդերձանք, հայ մարտիկների արագ բազմապատկվող ուժերը մեծ արագությամբ կարողացան Ղափանի երկիրը մաքրել օսմանյան զորքերից և առաջանալ դեպի Գողթն։

Այս հաղթանակից հետո էլ Նախջևանն ու Գողթնը նվաճած օսմանյան զորաբանակների դեմ կռիվը շարունակելու համար Դավիթ-բեկը կրկին փորձում էր մարտի մեջ ներգրավել նաև Արաքսի մյուս ափում առկա իրանական ընդդիմադիր ուժերը. «Արդ իբրև ետես Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր,— կարդում ենք «Պատմության» առաջին օրինակի Տեր-Ավետիսի պատմած երկ-

19 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 267։

20 Մուհամադ-Քազիմ. հ. I, էջ 355։